

ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ԱՐՁԱԿԸ

Վ. ԳԱՐՐԻԵԼՅԱՆ

Հայ բանաստեղծութեան մեծերից մեկի՝ Դանիել Վարուժանի ժառանգությունը մեր ժողովրդի հոգևոր գանձարանի անգնահատելի հարստությունն է, և նրա ամեն մի մասը հավասարապես թանկ է մեզ համար: Հզոր տաղանդով օժտված բանաստեղծը, իր կարճատև կյանքի տարիներին, ողջ էութեամբ, կյանքով ու գործով նվիրվեց իր տառապած ժողովրդի լուսավորութեան, սոցիալ-քաղաքական ազատագրութեան սրբազան գործին: Դպրոցական ու համալսարանական տարիներին օրեր ու լուծանում էին նրա հոգում ժողովրդի ճակատագրի տաղանայնորդ, որ գրական կերպարանք էին ստանում բանաստեղծութեանները, նամականիքի ու արձակ խոհերի ձևով, իսկ աշխատանքային տարիներին նա մխրճվեց կյանքի մեջ, հավասար նվիրումով եղավ և՛ մանկավարժ, և՛ հրապարակախոս գործիչ, և՛ բանաստեղծ: Նա գտնում էր, թե ժողովուրդը «հոգեկին ծարավ է» և «լույսի կուժը անհրաժեշտ է մոտեցնել իր շրթունքներուն»: Եվ «լույսի կուժը» նա մոտեցրեց նրանց շրթունքներին՝ ամենատարբեր եղանակներով. վարժարաններում՝ խորունկ ու հմայիչ դասախոսութեաններով, հասարակական սրահներում՝ ցնցող բանախոսութեաններով, մամուլի էջերում՝ սրամիտ հոգվածներով, մարդկանց մեջ՝ սրտամտ զրույցներով և ձեռքից-ձեռք անցնող գեղեցիկ ու կրթող բանաստեղծութեաններով:

Ճշմարիտ է գրականութեան պատմաբանը, որ չի անշատում մանկավարժ ու հրապարակախոս Վարուժանին բանաստեղծ Վարուժանից, քանզի նվիրման տարածուցի վրա հիմքում կարևորվում է նպատակի նույնականությունը: Բայց ճշմարիտ է նաև, որ կյանքի պատմությունը անցյալ է դառնում, իսկ գրական ժառանգությունը, եթե նրա հղացման հիմքում խառն է տաղանդի մատը, մրնում է սերունդներին, անցնում է սերնդից սերունդ, գտնում է իր ներքին հավասարակշռությունը:

Դանիել Վարուժանը բանաստեղծ էր, մեծ ու հզոր բանաստեղծ: Ալիշանի մասին Վարուժանն ասում էր, թե «ան բանաստեղծ էր, որ գիտություն կրներ»: Վարուժանն էլ բանաստեղծ էր, կյանքի՝ բանաստեղծ, ուստի չէր կարող չգրել նաև հրապարակախոսական, գրաքննադատական, մանկավարժական հոգվածներ, արձակ խոհեր, շոշափել հարցեր, որ ժողովրդի ցավի ու երազի թելադրանքով էին ծնվում:

Ուստի և կարևոր է դառնում, որ հիացումի ու բարձր գնահատանքի այն խոսքերի կողքին, որ ասվում են Վարուժանի պոեզիայի մասին, դրվեն նաև խոսքեր բանաստեղծի արձակ էջերի մասին՝ դիմանկարի ամբողջացման նըպատակով:

Իսկ ինչպիսի՞ն է բանաստեղծի արձակը: Եղավ, որ սփյուռքահայ մա-

մուտում նույնիսկ վեճ բացվեց՝ «Դանիել Վարուժան արձակ գրականութուն մշակա՞ծ է»: Ասվեց նաև, թև «արձակ գրականութուն շմշակեց»¹:

Ճշմարիտ է, որ Վարուժանը բանաստեղծ է և հրատարակել է բացառապես բանաստեղծական ժողովածուներ: Հետագա տարիներին նույնպես նրա գրքերը հրատարակվել են առանց ներառման բանաստեղծի արձակ էջերի, որոնք այնքան էլ սակավ չեն: Բացառություն էր «Երկերը» (1946), որ նմուշներ ուներ նաև Վարուժանի արձակից: 1984 թ. մի գրքում հավաքելով Վարուժանի բանաստեղծական ողջ ժառանգությունը (նաև անտիպներ), մենք անհրաժեշտ գտանք նմուշներ տալ նաև նրա գեղարվեստական, գրքաննադատական ու հրապարակախոսական արձակ էջերից, նաև մի քանի կարևոր նամակներ, գրտնելով, որ դրանով ընթերցողի համար առավել ընդգծվում ու ամբողջանում է Վարուժանի դիմանկարը:

Վարուժանի արձակ էջերը, անշուշտ, շատ ավելին են, քան ներկայացված է այդ ժողովածուում: Դրանք մնում են ցրված ժամանակի ու հետագա մամուլի էջերում, մասամբ էլ անտիպ են, պաշվում են բանաստեղծի արխիվում:

Վարուժանի կյանքի պատմությունը, ձևագրերի ու արխիվային այլ նյութերի ուսումնասիրությունը հաստատում է, թև բանաստեղծն իր խոհերը, հուզումները, գրական ու հրապարակախոսական մտածումները հաճախ է թրղթին հանձնել արձակի տարրեր ձևերով և, կարևոր է նշել, ոչ թև կյանքի որոշակի մի շրջանում, ինչ-որ որոշակի առիթով, այլ ամբողջ կյանքի ընթացքում, աշակերտական առաջին տարիներից, բանաստեղծական առաջին գրչափորձերի հետ միաժամանակ, մինչև իր կյանքի վերջին տարին:

Այսպես, 1901 թ. Վենետիկի Մխիթարյանների՝ Քաղկեդոնի վարժարանում սովորելու ժամանակ Եղիշե Դուրջանի վարժարան այցելելու առիթով աշակերտ Դանիել Զպուգբյարյանը (ղեռ Վարուժան գրական անունը չէր ընտրել. ընտրում է 1905-ի ամռանը), գրում է մի արձակ ձոն, որ հրապարակվում է «Արձագանք Մոտայի» աշակերտական ձևագիր թերթում: Նույն տարում, աշնանը, Մխիթարյան միաբանության երկուհարյուրամյա հոբելյանին նվիրված հիշատակարան-ժողովածուի մեջ լույս է տեսնում նաև «Քաղկեդոնի Մխիթարյանց վարժարանի ուսանող Դանիել Գ. Զուպուգբեոյանի» (Զպուգբյարյանի) արձակ ողջույնը: Հիշենք, որ այն Վարուժանի առաջին տպագիր խոսքն էր:

1902 թ. գարնանը «Մեծմուսյը ախպար» հայատառ թերթում լույս է տեսնում նրա «Թատրոնի շուրջ» հոդվածը, ապա ևս չորս ուրիշ հոդվածներ նույն տարում:

Հայտնի է, որ 1902 թ. մինչև ուսումնական տարվա ավարտը, Դանիել Զպուգբյարյանը կազմում է իր առաջին ժողովածուն՝ «Ծաղկեփունջ կամ Բրրգնիկցիի մը նվագները» խորագրով և հանձնում է հրատարակության: Ժողովածուի համար առաջարան հանձնարարական էր գրել վարժարանի հայերենի ուսուցիչ, վերատեսուչ Հ. Արիստակես Քասգանտիլյանը, ժողովածուն տպագրության էր արտոնվել գրքանշնության կողմից, սակայն ինչ-ինչ պատճառներով լույս չտեսավ: Ասենք, որ բանաստեղծի այդ առաջին ժողովածուում բանաստեղծութունների հետ տեղ էին գտել նաև երկու արձակ բանաստեղծութուն-խոհ՝ «Գարնան երեկոները Մոտայի մեջ» և «Գերեզմանատան մեջ» վերնագրերով:

Վարուժանի 1902—1903 թթ. աշակերտական տետրերում ու առանձին թղթերի վրա գտնում ենք մի քանի հետաքրքիր արձակ խոհեր ու արձակ բանաստեղծութուններ («Գյուղիս դպրոցը», «Նավարկոտ հյուղակե ձայն մը (Զմեռ)», «Եղերերգ», «Լույսին», «Ստվերին մեջ», «Ստվերներ», «Վերակեն-

¹ Տե՛ս «Նախիբ», 1953, № 45, «Հառաջ», 1962, նոյեմբերի 11:

դանություն» և այլն), ինչպես նաև մի ուրիշ տեսրում՝ ստեղծագործական շարադրություններ (բուրքն էլ անտիպ են):

1904 թ. ամռան արձակուրդների ժամանակ Մխիթարյանների ամառանոցային Աղուտ գյուղում հանգստանալիս վարժարանի աշակերտները (Վարուժանի ակտիվ մասնակցութեամբ) հրատարակում են ձեռագիր թերթ՝ «Եղի» անունով: Վարուժանը այնտեղ հրապարակում է բանաստեղծություններ և քննադատական-երգիծական հոդվածներ՝ Զիրզուշտ կեղծանունով (դրանցից մի քանիսի սևագրերը պահպանվել են բանաստեղծի տետրերում):

Հետագա տարիներին և հատկապես համալսարանն ավարտելուց հետո պոլսահայ մամուլի էջերում Դանիել Վարուժան ստորագրությունը տեսնում ենք նաև հոդվածի ու գեկուցման, հրապարակախոսական ելույթի ու ճանապարհորդական նոթերի, քնարական, փիլիսոփայական խոհերի ու այլ բնույթի արձակ էջերի տակ:

Տարաբնույթ են վարուժանի արձակ էջերը: Դրանք կարելի է խմբավորել երեք հիմնական ենթավերնագրերի տակ:

ա) գեղարվեստական արձակ՝ խոհական-քնարական արձակ էջերը,

բ) հրապարակախոսական արձակ՝ հրապարակախոսական ելույթներն ու հոդվածները,

գ) գրաքննադատական արձակ՝ գրականության ու գրողների մասին ելույթները:

Եվ վերջապես, «Վարուժանի արձակ» հասկացության մեջ կարելի է ներառել գրողի նամակները, որոնցից մի քանիսը մամուլում լույս են ընծայվել դեռևս բանաստեղծի կենդանության օրոք, ապա նաև հետագայում՝ մամուլում, ժողովածուներում և առանձին գրքերով: Նամականին՝ մի յուրօրինակ արձակ գրականություն, որի մեջ լավագույնս կերպավորվում է հեղինակը, երբեմն էլ նրանք, ում մասին խոսվում է: Նամակներում հստակորեն ընդգրծվում են գրողի գեղագիտությունը, կարծիքները կյանքի ու գրականության մասին, պարզվում են երկերի ծննդյան հիմքերն ու առիթները, և վերջապես՝ այդ ամենը նկատելի են դառնում նաև շնորհիվ Վարուժանի գեղարվեստական պատկերավոր մտածողության:

* * *

Վարուժանի գեղարվեստական արձակը խոհական, փիլիսոփայական հակումներ ունի և ժանրային առումով մոտենում է արձակ բանաստեղծության ժանրին: Այն բանաստեղծի արձակ է, ծնված կյանքի տարբեր պահերին, անձնական տպավորություններից, անմիջական ապրումների հետևանք է, ուստի և ինչ-որ տեղ քնարական խոհական երանգը դառնում է պարտադիր: Եվ դժվար չէ նկատել, որ Վարուժանի նմանաբնույթ արձակ էջերը հղացման ու գաղափարական նույնություններ ունեն նրա տվյալ շրջանի բանաստեղծությունների հետ: Նշանակում է՝ կյանքից ստացած՝ անմիջական տպավորությունները դրսևորման ձև են գտել միաժամանակ և՛ արձակ, և՛ շափածո:

Այսպես, «Ծաղկեփունջ կամ Բրզնիկցիի մը նվագները» խորագրով ժողովածուում² տեղ գտած երկու արձակ խոհերը՝ «Գարնան երեկոները Մոտայի մեջ», «Գերեզմանատան մեջ» (հետո ջնջել է) համահնչուն են ժողովածուի շափածո բանաստեղծություններին, նույն տրամադրությունների և նույն ասե-

² Զեռագիրը պահվում է ՀՍՍՀ ԳԱ Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, Գ. Վարուժանի ֆոնդում, թղթապանակ № 2: (Այսուհետև ֆոնդից բերված մեջբերումների տակ կնշենք կրճատ անունը՝ ԳՎՅ և համարը):

լիքի արտահայտութիւնն են: «Մաղկեփունջը»... բաղկացած է երկու մասից՝ ծաղիկներին ձոնված երգեր և սիրո ու բնութիւնայն երգեր: «Գարնան երեկոնները...» նույն խոհերի արտահայտութիւնն է՝ քնարական արձակի ձևի մեջ: Բընութիւնայն շքեղ գույների հմայք, առաջին սիրո զգացում, առաջին բանաստեղծութիւնայն ծնունդ, օրվա երանավետ պահերի ըմբռնում, հիացում ու երախտիքի խոսքեր բնութիւնայն շքեղ մի անկյանը՝ Մոտային՝ Մարմարայի ծովափի գեղատեսիլ մի վայրին, — ահա այդ արձակ բանաստեղծութիւնայն իմաստը: «Այն օրն» երբ հոգիս զգաց զգացումը սիրո և գեղեցկին, այն օրն՝ երբ գանգիս տակ սկսավ Իգեալն իր քթիթներն առնուլ, չքնաղ Մոտան՝ հոգեթով բանաստեղծական վայրս, երազներու ու խոհերու օրրանն՝ նշով միշտ ու ներշնչումներու գրգարան մը: Մտածմանցս յուրաքանչյուր թոխն իրեն կպարտիմ... Իր գեղածիծաղ ծոցը, իր գրգանքներուն մեջ ու տեսարաններուն առջև արբշտ՝ ժամեր ունեցա ես, ժպիտի ու արցունքի ժամեր, անէացման ժամեր...»: «...Ահ, կրնա՞մ մոռնալ միթե իր գարնան իրիկունները զով ու զգլխիչ: Ժայռի մը վրա ընկողմանած, որ ծովեզերքը կապույտ ջուրերուն վրա լուռ կպառկի, կդիտեմ, կզգամ և կգրեմ. այդ գիրերը լուրթ երկինքն կիյնան սրտիս մեջ և անկե թողթին վրա կշարվին խորհրդավոր»:

«Մաղկեփնջի...» բազմաթիվ բանաստեղծութիւններ (և՛ ծաղիկների, և՛ սիրո մասին երգերը) Մոտայի ներշնչումներ են, բնաշխարհի գույներն ու պատկերներն ունեն: Այդ է հաստատում բանաստեղծը ժողովածուի սկզբում գետեղված «Ձոնի» մեջ. «Մոտային ներշնչված երգեցի տխուր և զվարթ, ժպիտով ու արցունքով, հոգիս՝ մանուկ զգացումներով, սիրտս ալ անկեղծ սիրով մ'առլցալ երգեցի պահ մը...»:

«Գերեզմանատան մեջ» փոքրիկ խոհը նույնպես համահունչ է նույն օրերին (1902) ստեղծված բանաստեղծութիւնների տրամադրութիւններին: Խոհը ծնվել է քաղաքային գերեզմանատանը. շիրմաքարերի մեջ շրջող պատանի բանաստեղծը խորհում է «մեռելոց քաղաքի», «աշխարհի ոչնչութիւն» ու «կյանքի խաբուսութիւն» մասին, սակայն մեռյալներից ավելի՝ նրա մտքերը գնում են դեպի ապրող տառապալները, դեպի կենդանի մարդկանց վիշտը: Աղքատ մի կնոջ երկամյա զավակի շիրմաթմբի մոտ նա հիշում է մոր տառապանքներն ու արցունքները, նրա՝ սրտաճմլիկ ողբի ակամա մասնակիցն է դառնում կարծես:

Մի երկու տարի հետո ծնված այն բանաստեղծութիւնների մասին, որ հասկանալի են «Մարտուններ» ժողովածուում, Վարուժանը ասում էր. «Ան Ձեզ պիտի ըսե՛՜ ողբացեք այն, որ ոչ թե կմեռնի, այլ այն, որ թշվառ ապրեցավ, ողբը մահվան համար չէ, այլ թե ինչպես կը մեռնի և ինչ եղանակով ապրեցավ»³: Այդ նույն տրամադրութիւնը տեսնում ենք «Մաղկեփնջի...» մեջ տեղ գտած «Աղքատը» բանաստեղծութիւնայն մեջ: Այստեղ հեղինակը կարևորում է ոչ այնքան վերջին քառատողում արտահայտված՝ «մի խեղճ աղքատի անշուք դագաղի» և առանց հուղարկավորների թաղման արարողութիւնայն փաստը, որքան այդ խեղճի մանուկ հասակից մինչև մահ ընկած կյանքի պատմութիւնը:

«Գերեզմանատան մեջ» շիրմե-շիրմե թափառելով քնարական հերոսը գտնում է հայրենակիցների շիրմներ, ու «մոռացոնքի տեղատվութիւն և վերհիշումի մակընթացման ուժգնակի ծփանքով» մի հուզում է պաշարում նրան: Հին ծանոթների նկատմամբ կարոտի ու կորստյան զգացումը նրան երեսնիվայր հողին է նետում և՛ «հոգիս հեծկտաց» ու սիրտը «վերջին արցունքն է քամում»: Եվ այս անգամ դարձյալ հեղինակի վիշտը գտնում է մի ուրիշ ակունք, և դա ոչ թե մահվան իրողութիւնն է, այլ «պանդուխտ գերեզմանների»

³ Կ. Վարուժան, Երկեր, Եր, 1984, էջ 512:

պոլուիթյունը: «Ա՛հ, ծծեցեք այս արցունքը, ո՞վ պանդուխտ գերեզմաններ. այս արցունքն է ձեր կարոտակեզ ծնողքներուն, այրիացած ամուսիններուն, որք զավակներուն, տխրունակ աղգականներուն, այս արցունքը Բրգնիքի արցունքն է»:

Հայրենի գյուղից, ծննդավայրից հեռու պանդուխտ հայերի ճակատագիրը հաճախ է հուզել պատանի բանաստեղծին: Պոլսում սովորելու տարիներին (1896—1902) դպրոցական արձակուրդների օրերին Մխիթարյան դպրոցի գիշերօթիկ սան Դանիել Զպուգբյարյանը լինում էր հոր մոտ (հայրը ծառայում էր Խավյար խան կոչվող իջևանատանը) և ականատես էր դառնում պանդուխտ հայերի ծանր կյանքին: «Արձակուրդներս ընդհանրապես անցած են հորս քով Խավյար խանը, հայ պանդուխտներուն հառաչանքներուն և վերքերու տրոփյունին ունկնդիր»⁴, — գրում է իր մի նամակում, իսկ մի ուրիշ նամակում՝ «Կենակցած եմ հայ պանդուխտներուն հետ և արտասված անոնց վիճակին վրա» (ՆՄԿ—194): Այդ հուզումներն էին, որ մի երկու տարի հետո պիտի կերպավորվեին այնքան խորունկ ու ռեալիստական «Հիվանդ է» բանաստեղծության մեջ: Պատանի բանաստեղծը խանի անկյունում մեռնող պանդուխտի կացության մեջ առավել ողբերգականը համարում է պանդխտության իրողությանը՝ հարազատներից հեռու, «մեկ աչքը բաց» մեռնելը և նրա կնոջ կարոտակեզ սպասումը: Ու նաև այն, որ պանդուխտ է դառնալու նաև գերեզմանը նրա, հավերժական պանդուխտ: Ահա թե ինչ զգացում է խոցում նրա սիրտը. «պանդուխտ գերեզմանները» «պանդուխտ մարդկության» հավերժական կրակիծի խորհրդանիշն են: Պատանի գրողի հուզումի և արցունքի խորքում, անշուշտ, ընկած էր հայրենի գյուղի նկատմամբ ունեցած իր կարոտը. չէ՞ որ ինքն էլ հեռու էր հայրենի Բրգնիքից, «բաժնված այն հողեն», ուր իր մանկությունն էր անցել: Մանկության անմեղ օրերի կարոտից էր ծնունդ առել «Մաղկեփնջում...» գետեղված «Հիշատակ անցելվույն» բանաստեղծությունը:

Քնարական այն արձակ խոհերը, որ պահպանվում են բանաստեղծի՝ 1903—1905 թ.թ. վեներտիկի Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում սովորելու տարիների տետրերում (ԴՎՖ—38—42), վկայում են, թե նույն օրերին գրված բանաստեղծություններն ու արձակ էջերը ծնվել են նույնական հուզումներից ու մտածումներից:

«Գյուղիս դպրոցը» փոքրիկ խոհը նկարագիրն է հայրենի գյուղի դպրոցի նորակառույց շենքի և իմաստավորումը այն ջանքերի, որ թափել էր Սեբաստիայի թեմի առաջնորդ տեր Սահակ արքեպիսկոպոս Հաճյանը: Կրթական գործի, դպրոցի ու նրան օժանդակող անձանց նկատմամբ պատանի Դանիելը բացառիկ սեր ու ակնածանք ուներ: Հիշենք, որ իր առաջին ժողովածուն՝ «Մաղկեփունջը...» նա ձոնել էր Հաճյանին և այդ ձոնի մեջ կարևորում էր Հաճյանի լուսավորական գործունեությունը. «Կուզամ շնորհավորել ձեր ձեռնարկներուն հաջողությունն և փոխարինել ձեր երախտաց առաջին երախայրիքովս»: Պատահական չէր, որ մի քանի տարի հետո իր նոր (տպագիր առաջին) ժողովածուն՝ «Մարտունիքը» նա պիտի «խորին երախտագիտություն» ձոներ «Մուրատ և Ռաֆայել բարեբարներուն անմահ հիշատակին» (նրանց կտակով էր հիմնվել ու պահվում Մխիթարյան այդ հայտնի վարժարանը):

«Գյուղիս դպրոցը» խոհի մեջ պատանի բանաստեղծը գտնում է, թե «Ալբրբազան ծերունիի մը ամբողջ քրտինքը արժեց այդ շենքը շինել տալը», և որ պատանիները նրան միշտ ծաղիկներ պիտի բերեն (ինքը իր երգերի ծաղիկփունջն էր նվիրում), նրան պիտի հարգեն բոլորը, ու նաև Լկող սերունդը, «որ ավելի գիտուն և ավելի զգոն պիտի ըլլա»:

⁴ Դանիել Վարուժան, Նամականի, 1965, էջ 158 (այսուհետև կրճատ՝ ՆՄԿ և էջը):

Քայց գրողի համակրանքը խանդաղատանքի Երանգ է ստանում այն մըտքից, որ հասարակ գյուղացին՝ մի անտես մղումով իր մասնակցությունն է բերել այդ աղնիկ գործին. «Փա՛ռք այն պարզ ժողովրդյան, որ իր կրթարանին շինության թիկունք եղավ և իր կուրծքը գաղափարի համար արյունեց, որ իր հին թմբության մեջ զգաց վերջապես կյանքին շարժումը և հունձքերու մեջ այրած ձակատը վայրկյան մը գրքին էջերուն դարձուց, ձգեց կիսովի ստրկության ոտքը և մոռացոնքի քողին տակեն ու խավարչուտ անդունդներեն՝ քրքրտինքով ու մղեղով հեղձուկ կոկորդով մը աղաղակեց. լո՛ւյս կուզենք...»:

Դպրոցի, կրթության դերի, գիտության լույսին կարոտ մանկանց մասին գրողի խոհերը բանաստեղծական հնչեղություն են ստանում՝ հետաքրքիր պատկեր-համեմատությունների շնորհիվ: Ահա դպրոցի շենքը՝ գյուղի կենտրոնում, վեհանիստ, բարձր ու նկատելի. «Անիկա թաղերուն ճիշտ մեջտեղը կբարձրանա գեղեցկորեն: Գյուղին պալատն է. իր գահին վրա գիրքը կիշխեն՝ որուն մեջ սիրո օրենքը գրված է: Չորս դին՝ տուները ցած են և ան՝ երկու տանիքի վրա իր շուքը կրնա ձգել»: Ահա և խորհուրդ դպրոցական պատանիներին. «Դարձիր հո՛ն, դևպի դպրոց, մայրենի ստինքեն վերջ՝ մարդկային զարգացման ստինքն է ան. ծծև, ծծև ատկև, որ կազդուրվիս, ծծև, որ երակներեդ նախապաշարումի նախկին արյունը մաքրվի...»: Ապա՝ «և այն ակոսներուն մեջ՝ զոր դաշտը հայրդ կփորև, պիտի քրքրես ծերունի երկրին անցյալը և իր ճակատագիրը և վերջապես այն ատեն աղոթքիդ մեջ սրբազան եղբայրություն մը պիտի թրթռա և խորհուրդներուդ մեջ անվախճան արշալույսներ պիտի բացվին...»: Եվ ընդհանրացումը՝ «դպրոցը հուշարձանն է ընկերության. և գաղափարին ու կյանքին համար՝ կենսատու ավիշը. այն աշխարհ մըն է աշխարհի մեջ»:

1903 ղևկտեմբեր թվակիր է «Խավարկուտ հյուղակե ձայն մը» արձակ խոհը՝ գրված նույն օրերին, որը ծնվում էին «Սարսուռներ» շարքի բանաստեղծությունները, երբ պատանի բանաստեղծի խոհերը պատվում էին թշվառ մարդկության, մարդկային տառապանքի, խեղճերի ու տնանկների ճակատագրի շուրջ և ձևավորվում էր «Սարսուռների» գլխավոր մտայնությունը՝ պատկերել կյանքի տառապանքից ծնված վիշտը և վշտակցել, գթալ տառապալներին, ապա՝ խեղճերի ու թշվառների նկատմամբ արթնացնել մարդկանց զուրբ: Ելլ աստվածայի՛ն գուժը: «Սարսուռների» բաղմամբիվ բանաստեղծություններում («Ձյունև դագաղը», «Տղաք, ներեցեք», «Մուրացիկը», «Մոխիրներուն առջև» և այլն) կյանքի թշվառության նկատմամբ բանաստեղծի լուռ բողոքը Ելք է փնտրում և հանդում գթասրտության: Պիտի գթա աստված, պիտի գթան միմյանց մարդիկ: Գթություն են հայցում այդ խեղճերը, և գուժի համապարփակ ծավալման մեջ է բանաստեղծը տեսնում փրկությունը:

Ահա տառապանքի ու գթասրտության մասին է «Խավարկուտ հյուղակե ձայն մը» խոհը: Պատանի գրողը պատկերում է նույնպիսի մի թշվառություն, ինչպիսին գտնում ենք «Սարսուռներում»: «Ձմեռը եկավ, եղանակը մեր վշտերու զայրացումին: Իրերը կսարսուռն և այս սարսուռը իրերեն մարդուն կանցնի»: Ձյուն է գալիս, նստում ամենուր, ծառերը մերկ են, թռչունները պատուհանից պատուհան են զարկվում, և սարսուռը մարդկանց է անցնում ոչ թե այն պատճառով, որ ցուրտ է, այլ որ աղքատ են և փոքրիկ հյուղակը չի կարող դիմազրավել «ահավոր ցրտին»: «Հյուղակին շուրջը բուքը հորձանուտ կպտույտքե և կսպառնա: Ծտենն բլրակին ծայրեն ձյունահյուսքը կու գան պատին կրբախին, վայն կցնցեն և կփշրվին»: Սա տարերքն է, բնականը, սակայն կա ուրիշ հանգամանք. «Լուսամուտներուն ապակիները կտրած են, զոր շկրցանք շինել տալ և թուղթ փակցուցինք: Խարխուլ պատերու ճևղքերեն և թուղթերու բացվածքներեն հովը կսուլե և ներս՝ ձյունի փոշի մը կլեցնեն, որ անհալ կմնա»:

Գիպուկ պատկեր է՝ «որ անհալ կմնա»: Ուրեմն հյուղակուժ որքան ցուրտ է, որ ձյունը անհալ է մնում: Եվ ապա թշվառ բնակիչների խեղճ ու հաճախակի պատկերը. «Ներսը՝ խավարին մեջ՝ նիհար-մարմիններու աղեկտուր թարշամանք մը կողողողա. այդ մարմիններուն ամեն մեկ հյուծումը սրտիս մեջ սառած շիթ մը կկաթե և իրենց հետ միասին կողողամ»: Հյուղակի բնակիչները մոռյլ են, շեն խոսում, շեն հիշում նաև անցյալի մասին, որովհետև «ան անշափ սև կբացվի. խավար և անոթի... Ցո՛ւրտ...»: Իսկ երբ արևը «հիվանդ աղջկա մը նվաղկոտությամբ՝ մշուշն անգայտ քողի մը տակեն» երբեմն «գեմքը կցուցանե, պիշ պիշ կնայի», և «բնությունը իր հեղձուցիչ ճնշումին տակ քիչ մը շունչ կառնու», նրանց աչքերը երազանքով երկնքին են ուղղվում՝ հավատալու, թե՛ «Աստված կգթա մեզի...»:

Բանաստեղծի սերը բացորոշ է խեղճերի նկատմամբ: Նա ոչ միայն խորհում ու մտածում է նրանց մասին, այլև հոգեպես տանջվում նրանց համար. «Իրենց հետ միասին կողողամ»: Հեղինակի՝ խեղճերի նկատմամբ ողորակող սերն ու գորովը, գուժն ու կարեկցանքը Մխիթարյան բարեպաշտ դաստիարակության անմիջական հետևանք լինելով, իրենց խորքում ամուր հիմքեր ունենին՝ բանաստեղծի գյուղական ծագումը, աշխատավոր գյուղացու, խեղճ պանդուխտների պատկերները՝ դաջված հիշողության պաստառին, ու սերը ներանց նկատմամբ:

Զպուգքարյանի այս տարիների տետրերում պահվող մի ուրիշ արձակ բանաստեղծություն՝ «Նույսին» ձևը (ԴՎՖ—40) մեզ հուշում է, որ տարիներ հետո գրված և «Հեթանոս երգերում» տեղ գտած «Նույսը» բանաստեղծությունը հղացման խոր արմատներ ունի, իսկ «Ստվերին մեջ» արձակ բանաստեղծությունը (ԴՎՖ—43) վկայում է 1906-ին գրված հանրահայտ «Ջարդի» արմատների գոյությունը մասին: «Ստվերի մեջ»-ը մի փոքրիկ պատկեր է՝ նախապատրաստվող, հղացվող մի ոճի, ոճիներից մեկի նախածննդյան պահը, Սուվթանի գիշերներից մեկի պատկերը: Գիշերը բնության վրա իր թևերն է փռում, գիշերային համատարած՝ լուսության մեջ կոստանդնուպոլիս քաղաքը քնած է: «Երեք կարգ պարսպով պալատը, կարծես կասկածի ու վախի կույր աչքը լուսնին հառած՝ մթնշաղին մեջ դժոխային դավ մը կերկնե լուռ, տագնապոտ ու խոժոռական: Զինվորները—հսկման շուներ—պալատին շուրջը անդադար և լռելյայն կդառնան... հոն ամեն բան տառապանք մ'ունի՝ որ գիշերվան վսեմ խաղաղությունը կպղծե: Ամեն սիրտ զայրացած, հրեշային կյանքի մը համար կողողա. ամբողջ հանգիստը պիտի գոհե այդ սիրտը՝ կաթիլ մը քուն ճարելու համար անտե՛ր՝ որ սենեկին ստվերներուն մեջ կթալթի, ջղաձգորեն, կթալթի ծիրանվուն ծալքերուն մեջ փաթթված...»: Սուվթանը նոր ոճի է հղանում՝ տագնապած և դիվահար: «Մերթ կմռնչե ծեր գայլի մը պես. երևակայական ոգիներ կան շուրջը՝ որ իրենց արյունոտ, ճեղքված սիրտը անոր թագին կբամեն: Խաղաղ գիշերվան մեջ՝ ալեկոծ գիշեր մըն է ան:

Նա՛ այսօր կդիվահարի:

Վաղը՝ ուրիշ մահավճի՛ռ մը պիտի ստորագրե՛ս:

Փոքրիկ պատկեր է, սակայն մեծ ոճրագործի կերպարը կարծես թե գծված է՝ խարդախ, զազանային, դիվահար, նոր մահավճռի որոշման տենդով բռնված:

«Ոճիներն արդ խավարի լուսության մեջ կդարբնվին»,— մի ուրիշ առիթով, հետագայում պիտի ձևակերպեր Վարուժան-բանաստեղծը:

Այդպես հեղինակը պիտի պատկերեր ջարդի իրագործման նրա հրամանը՝

«...Օր մը սև

Ելուրդ-Քյոշկի անկյուններուն մեջ սնած՝

Սուվթանական գանգե գուրս,

Զպուզքյարյանի վենետիկյան շրջանի տետրերում պահված վերոբերյալ և ուրիշ արձակ գրությունները (չմշակված, սևագիր) հաստատում են այն միտքը, թե բանաստեղծի խոհերը, բանաստեղծություն դառնալուց առաջ կամ հետո, երբեմն էլ արձակ բանաստեղծության կամ պարզապես արձակ խոհի կերպն են ստացել:

Գենտյան շրջանից գեղարվեստական արձակ գրություններ չեն պահպանվել: Հետագա տարիներին գրված արձակ էջերից Վարուժանը նաև մամուլին է հանձնել և մեզ են հասել (մամուլի էջերում) հետաքրքրություն ներկայացնող այնպիսի գործեր, ինչպիսիք են՝ «Հողդարի բլրակին», «Ըղեղներ», «Հերոսը», «Տիպարներ» խոհական արձակները, «Դրվագ մը ճամփորդի հին հուշերես» տպավորություն-նոթը:

Մխիթար Սեբաստացու հայրենի փոքրիկ գյուղակը՝ Հողդարը, Սեբաստիային մերձ էր, և քաղաքի հայկական թաղերը ընդարձակվելով՝ դարասկզբին արդեն հասել և այն ներառել էին իրենց մեջ: Մխիթարյանների ուշիմ ու երախտագետ սանը՝ Դանիել Վարուժանը, Սեբաստիայում աշխատելու տարիներին (1909—1911) մեկ անգամ չէ, որ այցի է գնացել Հողդարի բլրակին: Եվ մի օր էլ ծնվել է քնարական արձակ այն գեղումը, որ սիրով իր էջում գետեղել է Սեբաստիայի «Հող-դար» թերթը (1911, № 23): Հողդարի բլրակին ուղղված քնարական այս խոսքում հեղինակը իմաստավորում է հողի ուժը, աշխատավոր գյուղացուն և փոքրիկ, աննշան այն գյուղակը, որ ծնել է Մխիթարի նման մեծ մարդուն: Հուզառատ, պատկերավոր խոսք է ասում բանաստեղծը և այդ խոսքի հիմքում իր սերն ու նվիրվածությունն է դնում՝ առ հայրենի ժողովուրդը: Հողդարի բլրակի «համեստ բարձունքի» վրա կանգնած, ունկնդիր «չորս հովերու» անմահ երգին, հայրենի տան տրտունջքի ու փառքի երգին, բանաստեղծը իր սիրո և նվիրումի խոսքն է ուղղում Հողդարին. «Վողիդ վրա հայ տնակները բուլններու պես ցանված են նախնիներու շինարար ձեռքերով. տնակներ՝ որոնց պատերը կծեփեծ ամառային արեգակը, և որոնց երդիկներուն վրա, գիշերը, աստղերը մայրորեն կհսկեն, կաղթեն և կուլան իրենց մարգարտազօծ աչքերուն ծորան ծորան արցունքով. տնակներ, որոնց դռնակները արշալույսները կբանան և լուսնակները կփակեն:

Քու գորշ հողդ ծոթրին կբուրե և կավդ է լուսազանգ՝ որոնց վրա հայկակները տատրակներու պես կպառկեն և հսկաներու պես կարթնանան. քու կավդ, քու կավդ կակուղ է և արևեն խորխուլած, հատիկ հատիկ, փոշի առ փոշի, հազարավոր սերունդներու սրտերը շաղվեց և երակներն հոսեցուց, մանուկներուն մեջ վարդեր ծլարձակեց, պարմաններուն մեջ զորությունն առնական և նահապետներուն մեջ անմահություն. երեխաներու այտերեն և ալեզարդ մորուքներեն ծերերու քու կավդ է որ կհոսի վարդերու և շուշաններու իսկություն պես:

Ես կսիրեմ աղբյուրներդ, բարբարոս քերթվածներ՝ քանդակված անտաշ քարերու մեջ՝ որոնց վրա կապրի մամուլը սնդուս. գուռերու վրա Կարիբուհին կնստի. իր քողին խաղաղության մեջեն երբ ան կհսկի շուրերուդ վրա օծելու համար իր աչքերը բոցանուտ, ակերդ կվառին. աղբյուրներդ կարշալույսանան և անոնց միօրինակ երգը աստղերու պես կբաղցրանա: Ես կսիրեմ ուռիներդ

⁵ Գ. Վարուժան, Երկեր, 1984, էջ 115:

հովանավոր՝ որոնք խորախորհուրդ մըմունջներուն մեջ կծրարեն գթեզ, և կը-խորհիմ անոնց շուքին տակ խաղացող բոբիկ մանուկներուն վրա»⁶:

Այս բանաստեղծական հղումները իմաստավորվում են շարունակութեան մեջ, ուր խոսքը այն մասին է, թե մի օր էլ մեծ մարդու՝ Մխիթարի «օրոցքը օրորվեցա՞վ քու մեկ բարի հյուղակիդ մեջ»: Եվ որպէս Մխիթարյան սաներից մեկը՝ բանաստեղծը հետուններից ողջույնի խոսք է բերում, իր ու Մխիթարի սե-րունդի խոսքը:

Նույն «Հող-դարի» մեջ 1911-ին Վարուժանը լույս ընծայեց «Ըղեղներ» արձակ բանաստեղծութիւնը, մի ինքնատիպ դատում, պատկերավոր մի խոհ մարդկային ուղեղների, մտածական կարողութեան տարատեսակների մասին: Միջակ մարդկանց, կրոնամուլների, շար ու բարի ու այլազան գբաղումների մարդկանց ուղեղների բնութագրումից հետո Վարուժանը իմաստավորում է հերոսի, բանաստեղծի, հանճարի մտածումը՝ ինքնատիպ դատումներով.

«Ըղեղներ կան՝ որոնք վառողամաններ են՝ զոր կայծ մը բավական է պայթեցնելու, և արյունը բավական է մարելու:— Անոնք հերոսներու ըղեղ-ներն են:

Ըղեղներ կան՝ որոնք աղամաններ են. առանց ուրիշի մը լույս ծծելու՝ լույս կարտաբխեն, անոնք ոչ կծոին, ոչ կգծվին, այլ կփշրին, բայց շեն մարի:— Անոնք բանաստեղծներու ըղեղներն են:

Ըղեղներ կան՝ որոնք աշխարհներ են՝ միշտ արևներու շուրջը դարձող. էակներու լեզուներ կապուցնեն. իրենց ծնունդն անծանոթ է՝ ինչպէս նաև իրենց վախճանը. անոնք հաճիտներութեան կպատկանին:— Անոնք հանճարնե-րու ըղեղներն են»⁷:

Բանաստեղծի, հերոսի, հանճարի մասին խոհերի այս մեկտեղումը իրար կողքի՝ պատահական չէր: Հայ նոր շրջանի ողմանտիզմի ներկայացուցիչ Վա-րուժանը իր գեղագիտութեան մեջ շատ կողմերով համակիր էր նեոողմանտիկ-ների «գերմարդու» տեսութեանը և Շոպենհաուերի ընդունած «երեք գերմար-դերի» (Սուրբը, Հանճարը, Հերոսը) իր յուրօրինակ բացատրութիւնն էր տվել դեռևս 1909-ին Պարտիզակում կարդացած զեկուցման մեջ, երբ Գինտի հա-մալսարանն ավարտելով՝ հայրենիք վերադարձի ճանապարհին մի կարճ ժա-մանակով այցելեց ընկերներին: Այդ բանախոսութիւնը չի պահպանվել, սա-կայն նրանից մի հատված տպագրվել է ժամանակի մամուլում՝ «Հերոսը» խո-րագրով: Վարուժանը գերմարդու մեջ տեսնում է կատարյալի խտացումը՝ «հո-գեկան և մարմնավոր կարողութիւններուն ներդաշնակութիւնը» և ապագայի համար պայքարող ոգին. «Մարգարեն ապագան կտեսնէ, Հերոսը կպատրաստե զայն»: Ապա նաև զոհաբերութիւնը՝ «Առանց զոհի հերոս չկա»⁸:

Վարուժանի գեղագիտութեան մեջ արվեստագետը (բանաստեղծ-մար-գարեն), հերոսը, հանճարը իր ժողովրդի տառապանքի կրողներն են, պայքա-րի տանող մարտիկ-առաջնորդներ:

Վարուժանի տեսրեղում գտնում ենք առանձին հիշատակումներ, գրա-ռումներ, որոնք հուշում են մեզ, թե նա մտադիր է եղել նոթագրելու իր տպա-վորութիւններն ու հուշերը: Վենետիկի, Գինտի միջավայրերը շափազանց խոր տպավորութիւններ էին թողել նրա էութեան ու հիշողութեան մեջ, որոնք նա չէր կարող գրի շանել: Այսպէս, գեղայան շրջանի մի ծոցատետրում Վարու-ժանը գրառում է. «Վերջապէս շեմ կրնար դսպել Վենետիկ վրա խորհելու և գրելու բաղձութիւնս, այնքան միտքս տարածված և հաստատված է անոր

⁶ Նույն տեղում, էջ 452:

⁷ Նույն տեղում, էջ 454:

⁸ Նույն տեղում, էջ 456:

բազմաճյուղ ջրանցքներու մեջ, ինչպես վիթխարի խարիսխ մը անդնդահարու-
թյան կողերն ընդգրկող: Վենետիկը մոռնալ՝ ինծի համար կնշանակե մոռա-
նալ քերթողական արվեստս, բոլոր գույները երգիս, զոր մարդկային հոգին
կդիտե անկախաբար աչքին բոլոր կարողութիւններուն» (ԴՎՖ—52): Վարու-
ժանը ծրագրել էր՝ «Օր մը իր (Վենետիկի—Վ. Գ.) համապատկերը վրձնել ըն-
դարձակ քերթվածի մը, գուցե վեպի մը մեջ»⁹:

Բանաստեղծի այդ ցանկութիւնն նախնական մի իրագործումն էր այն ճամ-
փորդական հուշը, ուր պատկերված է Վենետիկից Աթենք նավով անցած իր
ճանապարհը, 1909-ին հայրենիք վերադառնալիս: Հին հուշերից մի դրվագ է
սա, ինչպես վերնագրել է ինքը («Դրվագ մը ճամփորդի հին հուշերես»), որ
տպագրվել է Զմյուռնիայի «Հայ գրականութիւն» ամսագրի 1911 թ. 2-րդ հա-
մարում: Հավանաբար այս միակ դրվագը չէ, որ շարադրել է Վարուժանը, հա-
վանաբար այն մի հատված է, իսկ մնացյալը մեզ չի հասել: Ինչպես որ, ա-
սենք, մեզ չի հասել այն վեպը (թե՛ վեպի հատվածները), որ ըստ Դանիելի մը-
տերիմ ընկերոջ՝ Դերենիկ Ճիզմեճյանի վկայութեան, գրում էր Վարուժանը Վե-
նետիկում ուսանելու տարիներին և որից իր համար Վարուժանը կարդացել է
հատվածներ:

«Վենետիկից—Աթենք» հուշը գեղարվեստական արձակի մի հետաքրքիր էջ
է, ուր դրսևորվել է հեղինակի նուրբ դիտողականութիւնը, շրջապատը, բնու-
թիւնը արվեստագետի աչքերով տեսնելու կարողութիւնը, ժողովուրդների,
մշակույթի պատմութեան իմացութիւնը, նյութի բանաստեղծական ընկալման
ունակութիւնը, պատկերավոր մտածողութիւնը: Ճանապարհի, դեպքերի սո-
վորական պատմութեան նկարագրութիւն չէ այն, այլ զգայական, տպավորա-
կան մի էջ: Վենետիկ—Կորֆու—Կորնթոսի ջրանցք—Պիրե—Աթենք ճանապար-
հի պատկերավոր նկարագրութիւնները, որ մեջընդմեջվում են հույն ժողովըր-
դի ու նրա մշակույթի մասին տեղեկութիւններով, փոխանցվում են ընթերցո-
ղին. գաղտնիքը Վարուժան-բանաստեղծի զգացված ու պատկերավոր խոսքի
մեջ է:

Վենետիկի մասին ընդամենը մեկ պարբերութիւն, և այն գրեթե տեսա-
նելի է դառնում. «Նավը իր ետև թողուց Վենետիկը, ալիքներով և աստղերով
խեղդված քաղաքը, ուր տարիներ երազեցի և մտածումներս նկարել սորվեցա.
Երբ Ադրիականի թագուհին հետզհետե իր մարգարտահեռ քղանցքները կհա-
վաքեր նայվածքներուս առջևն և հորիզոնին ետև կաներութանար՝ հոգիս
անհուն տրտմութեամբ մը համակեցավ, և որպեսզի հուշերուս մեջ անմահորեն
բյուրեղանա՝ որոշեցի — օր մը — իր համապատկերը վրձնել ընդարձակ
քերթվածի մը»¹⁰, գուցե վեպի մը մեջ»¹¹:

Տպավորիչ է ջրանցքի, ապա բաց ծով դուրս գալու պատկերը. «... ջը-
րանցքը կապույտ ժպավենի մը պես կերկարի միշտ նեղնալով, հետո վերջ-
նականապես բացվելու համար ավելի լայնորեն, ավելի անհունորեն՝ այն լա-
զուրագեղ ծովուն վրա՝ որ մեզ պիտի առաջնորդե Սալամինայի շնաշխարհիկ
ծոցը, ծոց մը՝ որուն ջուրերուն գեղեցկութիւնը անպատում է: Արդյոք նա-
խապաշարումե՞ս էր — շեմ գիտեր — կարծես այդտեղ ալիքներուն կապույտը
երկնային թափանցիկութիւն մը՝ երազային գեղեցկութիւն մը կզգենու, նման
կնոջ մը խաժ աչքերուն՝ որոնք իր հոգվույն լույսերով ողողված են: Հիրավի
այդ ջուրերը միայն արժանի են Աստղիկներ ծնելու, այդ ջուրերը լոկ կրնան
Դիցուհիին ծոցը վայելչորեն հորինել: Մովախորշը ամբողջովին շպարված է

⁹ Նույն տեղում, էջ 447:

¹⁰ «Վենետիկ» վերնագրով քերթված նա գրեց և գետնոց «Հեթանոս երգեր» գրքում:

¹¹ Գ. Վարուժան, Երկեր, Եր., 1984, էջ 447:

Ատտիկեի հզոր արևով: Իր հեղուկ մարմնույն հեշտութունը, վավաշտ կնոջ մը պես, կտարածե իր ավազանին բոլոր լայնությամբը, իր կապույտ մորթը մեղմիկ քամիին տակ կծալծալի հարածուն փոթերով, որուն վրաս անընդհատ պսպղուն մարգարիտներ կհոսին և այնքան կփոխվին. ամեն բարձունք լույսի մեջ է, իրենց ելևէջը, թեքումը, խորացումը կամ վերասլացքը հայտնող ամեն գիծ այնքան պայծառ, այնքան որոշ է...»¹²:

Պատկերի ամբողջականութունը շխաթարելու նպատակով քաղված ծավալուն այս մեջբերումից հետո պիտի ավելացնենք, թե բանաստեղծը իմաստավորում է պատկերը, գտնելով, թե այդ իսկ զգացողության թելադրանքով շէ՞ր, որ հին հույները իրենց «արվեստը ըրին հստակ և իրապաշտ» և «ստեղծեցին ու կաղապարեցին իրենց աստվածները գերազանցորեն մարդկայնական»¹³:

Վարուժանի արվեստի առավել բնորոշ առանձնահատկութունը պատկերավոր մտածողությունն է: Իրավացի էր Պարույր Սևակը, երբ ընդգծում էր Վարուժանի «ամեն ինչ պատկերավոր ասելու» հակումը, «գարմանալի պատկերավոր ոճը», «ամեն կարգի երևույթների մեջ պատկերավորման համապատասխան եղանակ գտնելը»¹⁴: Իրոք, ամեն կարգի երևույթի, ամեն տեսակ ժանրի համար նա գտնում էր համապատասխան եղանակ ու պատկեր:

Վարուժանի պոեզիան, իրոք, «պատկերների ու համեմատությունների աներևակայելի հարստությամբ» է աչքի ընկնում: Պատկերավոր մտածողությունը, համեմատությունների կիրառումը բնորոշ է նաև նրա գեղարվեստական արձակին, ավելին, նույնիսկ հրապարակախոսական ու գրաքննադատական հոդվածներին, անգամ նամակներին: Վենետիկյան տարիների իր գեղագիտական դաստիարակության մասին Վարուժանը հիշում է. «Վենետիկը կգունագեղե հոգիս. հոն առանց պատկերի անկարելի կըլլա ինձի խորհիլն իսկ: Արվեստս փրկված է» (ՆՄԿ—194): Ուրեմն խորհիլն անգամ՝ պատկերավոր: Եվ շէ՞ որ յուրովի խոհեր են նրա արձակ էջերը:

Վարուժանի արձակ էջերից մենք խոսեցինք միայն գեղարվեստական արձակի մասին: Բայց մենք «Վարուժանի արձակ» հասկացության մեջ ընդգրկում ենք նաև նրա հրապարակախոսությունը և գրքաննադատական բնույթի գործերը: Դրանց քննությունը թողնելով մի ուրիշ առիթի, միայն թվարկենք առավել կարևորները: Ինչպես զավառում (1909—1912), այնպես էլ Պոլսում (1912—1915) անցկացրած աշխատանքային տարիներին նա հաճախ էր հանդես գալիս հրապարակային ելույթներով ու զեկուցումներով: Ժամանակակիցները հիշում են նրա խոհուն, պատկերավոր, կրակոտ ելույթները, որոնցից, ցավոք, քչերն են մեզ հասել: Ժամանակի ու հետագա տարիների մամուլի էջերում տպագրվել են դրանցից մի քանիսը միայն: Հասարակական, քաղաքական, լուսավորական, կրոնական հարցերի շուրջ բազմաթիվ հոդվածներից ու ելույթներից հիշատակության արժանի են՝ «Վեհաճաշը», «Յարական Ռուսիա և հայկական հարցը», «Թերզյանի խնդիրը տեղվույս մեջ», «Բաց նամակ», «Վերքը կարյունի», «Հայոց լեզվի խնդիրը», «Վաղվան հոբելյանները», «Հուսկ բանք» և այլն: Գրականության, գրողների, գրական հարցերի մասին՝ «Րաֆֆի», [«Ալիշան և Պեշիկթաշլյան»], «Գրական դպրոցներ», «Յարճանյանի քերթողությունը», [«Հորդրներ սկանակներուն»], «Կծու խոսքեր» և ուրիշ բանախոսություններ, ելույթներ ու գրառումներ:

¹² Նույն տեղում, էջ 449:

¹³ Նույն տեղում, էջ 449—450:

¹⁴ Պարույր Սևակ, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 343, 333:

Եվ այս ամենի մեջ (ու նաև նամակների) Վարուժանի համար «անկարելի է առանց պատկերի խորհիլը»: Բանաստեղծական շքեղ ոճերը, պատկերավոր մտածողութունը, նուրբ հումորն ու երգիծական ձիրքը նկատելի են վերոբերյալ գրեթե բոլոր գործերում: Եվ այդ ամենի շնորհիվ բանաստեղծի խոսքը դառնում է դիպուկ ու տպավորիչ, ասելիքը՝ հստակ, նյութը կերպավորվում է, գլխավոր գաղափարը՝ ընդգծվում:

Վարուժանի արձակը ինքնատիպ է, ինչպես նրա պոեզիան, ու թեև ստորադաս նրան, սակայն կարևոր բանաստեղծի կյանքի ու ստեղծագործության ուսումնասիրության գործում, հեղինակի դիմանկարի ամբողջացման համար:

В. А. ГАБРИЕЛЯН—Проза Даниела Варужана.—Великий армянский поэт Даниел Варужан оставил богатое литературное наследие, часть которого составляет проза. Она, однако, почти незнакома широким кругам читателей. Статья—первая попытка разбора и оценки прозаических произведений поэта.